Օգոստոսի 9-ին առաւօտեան 7 ժամին վարդախտից (տիֆ) կնքեց իւր մահկանացուն 6 օր անկողնում պառկելուց յետոյ Ս. Էջմիածնի Ճեմարանի Զ-րդ դասարանի ընթացաւարտ աշակերտներից մէկը—Շուշեցի Տիգրան Ժամհարեանը: Հանգուցեալը Շուշու թեմական դպրանոցի դասընթացն աւարտելով, անցեալ $18^{90}/_{91}$ թ. ուսումնական տարուայ ընթացքում մտել էր Ճեմարանի Զ-րդ դասարան իր ուսման ընթացքը շարունակելու՝ Մեծապատիւ Ժամհարեան եղբարց հաշուով. սակայն անգութ մահը թոյլ չը տուեց խեղճին իր նպատակին հասնելու և իր ծերունի ծնողաց թև ու թիկունք լինելու, 21 տարեկան հասակում վերջ տալով նորա կեանքին: Հանգուցեալի դիակը 1 օր Ս. Գայանէի տաճարում մնալով, Օգոստոսի 10-ին ս. պատարագից յետոյ հանդիսաւոր կերպով ամփոփուեցաւ Միաբանութեան գերեզմանատանը: Եկեղեցում վաղամեռիկի դագաղի վերայ մի ազդու և սրտաճմլիկ դամբանական խօսեց Գերապատիւ Սուքիաս եպիսկոպոս Պարզեանցը և հանգուցեալի աշակերտական բարեմասնութիւնները միառմի թուելով, Աստուծոյ մխիթարութեան հոգին հայցեց վաղամեռիկի ծնողների համար, որոնց միակ արու զաւակն էր հանգուցեալը: Իսկ գերեզմանի վերայ հանգուցեալի դասընկերներից մէկն արտասանեց նոյնպէս մի ազդու դամբանական և այդպիսով սև հողը իր ծոցն առաւ թշուառ երիտասարդի մարմինը:

Տէրը լուսաւորէ նորա հոգին և մխիթարէ նորա սգացեալ ծնողներին ու ազգականներին: